Հաստատված է
Պետության և իրավունքի
տեսության և սահմանադրական
իրավունքի ամբիոնի 30. 08. 2022 թ.
նիստում (արձ. թիվ 1)
Ամբիոնի պետ՝ .....
(ստորագրություն)
.....
(ամիս ամսաթիվ)

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

(Կազմվել է ուսումնական ծրագրի նախագծի հիման վրա)

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		Պետության և իրավունքի տեսություն 1
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ		Իրավագիտություն, անվճար ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ		Պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոն E-mail: pitambion@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Ռ. Մարանդյան (ի.գ.թ.), Ա. Մարգարյան E-mail: rmarandyan@mail.ru, abgarmargaryan@mail.ru, հեռ. 055 52 26 33
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		1-ին կուրս, 1-ին կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ		բակալավր

ԿՐԵԴԻՏՆԵՐ		**3 (երեք)**
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ		«Պետության և իրավունքի տեսություն 1» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 90 ժամ, որից 42 ժամ դասախոսություն, 28 ժամ սեմինար պարապմունք, 20 ժամ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը չորս լսարանային ժամ տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում քննություն հանձնելով:

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ		Դասընթացը կառուցվում է հանրակրթական ավագ դպրոցում «Հասարակագիտություն» առարկայից ձեռք բերված գիտելիքների հիման վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		«Պետության և իրավունքի տեսություն 1» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են պետության և իրավունքի տեսության ընդհանուր բնութագիրը, պետության և իրավունքի ծագումը, պետության հասկացությունը, էությունը, տիպաբանությունը, պետական իշխանության հասկացությունը, իրականացման մեթոդները, լեգիտիմությունը և լեգալությունը, պետության գործառույթները, ձևը և մեխանիզմը, քաղաքական համակարգը:
ՆՊԱՏԱԿ **ԽՆԴԻՐ/ՆԵՐ**		Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ պետության և իրավունքի տեսության ընդհանուր բնութագրի, պետության և իրավունքի ծագման, պետության հասկացության, էության, տիպաբանության, պետական իշխանության հասկացության, իրականացման մեթոդների, լեգիտիմության և լեգալության, պետության գործառույթների, ձևի և մեխանիզմի վերաբերյալ: Դասընթացի խնդիրներն են՝ • ներկայացնել պետության և իրավունքի տեսության ընդհանուր բնութագիրը, • ուսումնասիրել պետության և իրավունքի ծագումը, • սահմանել պետության հասկացությունը, • վեր հանել պետության էության առանձնահատկությունները, • ներկայացնել պետության տիպաբանությունը, • սահմանել պետական իշխանության հասկացությունը, • ուսումնասիրել պետական իշխանության իրականացման մեթոդները, լեգիտիմությունը և լեգալությունը, • ուսումնասիրել պետության գործառույթները և ձևը, • ուսումնասիրել պետության մեխանիզմի հատկանիշները և կառուցվածքը, • ուսումնասիրել քաղաքական համակարգը:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ***Կարողանա՝***		1. սահմանել պետության և իրավունքի տեսության հասկացությունը, վերլուծել դրա հատկանիշները, 2. բացահայտել իրավագիտության համակարգում պետության և իրավունքի տեսության տեղը, կապը այլ գիտությունների հետ, պետության և իրավունքի տեսության առարկայի բովանդակությունը և մեթոդները, 3. ներկայացնել նախապետական շրջանում հասարակության կազմակերպման և հասարակական հարաբերությունների կարգավորման ընդհանուր բնութագիրը, 4. վերլուծել պետության և իրավունքի առաջացման հիմնական գործոնները, պատմական ուղիները և տեսական մոտեցումները, 5. սահմանել պետության հասկացությունը, վերլուծել դրա հատկանիշները, 6. բացահայտել պետության էությունը և տիպաբանության հիմնական մոտեցումները, 7. սահմանել պետական իշխանության հասկացությունը, վերլուծել դրա հատկանիշները, 8. տարբերել պետական իշխանության իրականացման մեթոդները, լեգիտիմությունը և լեգալությունը,

		9. տալ պետության գործառույթների սահմանումը, տարբերակել այն պետության կողմից իրականացվող գործունեության այլ տեսակներից, 10. բացահայտել պետության գործառույթների համակարգը, 11. սահմանել պետության ձևի հասկացությունը, վերլուծել դրա բաղադրիչները, 12. սահմանել պետության մեխանիզմի հասկացությունը, բացահայտել դրա կազմակերպման, գործունեության և կառուցվածքի առանձնահատկությունները, 13. սահմանաել քաղաքական համակարգը, 14. բացահայտել պետության դերակատարությունը քաղաքական համակրգում 15. կատարել գործնական առաջադրանք:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1. Պետության և իրավունքի տեսություն: Ուս. ձեռնարկ / Մ. Մուրադյան, Ռ. Մարանդյան, Երևան, «Լուսաբաց» հրատ., 2011, 170 էջ, 2. Պետության և իրավունքի տեսություն: Ուս. ձեռնարկ / Հեղ. խումբ: Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան, Երևան, «Լուսաբաց» հրատ, 2014, 692 էջ, 3. Պետության և իրավունքի տեսություն: Ուս. ձեռնարկ / Հեղ. խումբ: Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան, 2-րդ լրամշակված հրատ., Երևան, «Լուսաբաց» հրատ, 2016, 628 էջ, 4. Վաղարշյան Ա., Պետության և իրավունքի տեսություն - 1 / Դասախոսություններ, ԵՊՀ, Եր.: Հեղինակային հրատարակություն, 2013, 224 էջ, 5. Վաղարշյան Ա., Պետության և իրավունքի տեսություն - 1 / Դասախոսություններ, ԵՊՀ, Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016, 280 էջ, 6. Матузов Н. И., Малько А. В. Теория государства и права. Курс лекций. М., Изд-во «Юристь», 1997, 672 стр. 7. Хропанюк В. Н., Теория государства и права / Учебник, 3-е изд., доп. и испр., М., Изд-во «Омега-Л», 2008, 384 стр., 8. Общая теория права и государства: Учебник для вузов / В. С. Нерсесянц, М., Изд-во «Норма: НИЦ ИНФРА-М», 2015, 560 стр.:
Լրացուցիչ		1. Վաղարշյան Ա., Պետության կառավարման ձևը և նրա պաշտպանության ու անվտանգության պրոբլեմը // «Հայկական բանակ» հանդես, Երևան, 2016, № 2(88) էջեր 45-53, 2. Վաղարշյան Ա., Պետաիրավական ռեժիմ հասկացության հիմնախնդիրները // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու. Նվիրվում է Ա. Եսայանի ծննդյան 100-ամյակին, գլխ. խմբագիր՝ Գ. Ղազինյան, Երևան, ԵՊՀ, 2015, էջեր 35-55, 3. Вагаршян А. // Обороноспособность как принцип организации и деятельности государственного аппарата / Евразийский юридический журнал, № 12 (55), М., 2012, стр. 147-149: 4. Лебедев В. А. // Государственная власть как форма выражения публичной власти / Вестник Челябинского государственного университета, 2010, № 25 (206) Право, Вып 25, стр. 5-9, 5. Мелехин А. В., Теория государства и права: Учебник, М., Маркет ДС, 2007, 640 стр., 6. Венгеров А. Б., Теория государства и права: Учебник для юридических вузов. 3-е изд., М., Юриспруденция, 2000, 528 стр,

		7. Матузов Н. И., Малько А. В. Теория государства и права. М., Изд-во «Юристъ», 2004, 512 стр., 8. Абдулаев М. И., Теория государства и права: Учебник для высших учебных заведений, М., Финансовый контроль, 2004, 410 стр.:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ		Քննություն («Գերազանց», «Լավ», «Բավարար» կամ «Անբավարար»):
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված) առաջադիմություն: Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»: Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ճիշտ է հիմնավորում պատասխանը, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով. բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է տեսական դրույթները ճիշտ տեղայնացնել կոնկրետ օրինակներում. գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ:
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:
Ներկայություն		Սովորողի՝ դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկնդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև՝ մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:
Գրավոր աշխատանքներին ներկայացվող		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:

պահանջներ **Ինքնուրույն և գործնական աշխատանքներ**		Ինքնուրույն աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 1 **Պետության և իրավունքի տեսության ընդհանուր բնութագիրը** **(6 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Պետության և իրավունքի տեսությունը որպես հումանիտար գիտություն 2. Պետության և իրավունքի տեսությունը որպես հիմնարար իրավաբանական գիտություն 3. Պետության և իրավունքի տեսության առարկայի բնութագիրը 4. Պետության և իրավունքի տեսության մեթոդները 5. Պետության և իրավունքի տեսության ուսումնական դասընթացը	Հարցեր 1-5 – ներկայացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա: Հարց 1 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը և առանձնացնում այն իրավաբանական և ոչ իրավաբանական առարկաները, որոնց հետ կապված է պետության և իրավունքի տեսությունը: Հարցեր 1-5 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են պետության և իրավունքի տեսությունը՝ որպես հումանիտար և հիմնարար իրավաբանական գիտություն, պետության և իրավունքի տեսության առարկան, մեթոդները և ուսումնական դասընթացը, քննարկում են ինքնուրույն աշխատանքի արդյունքները:

Թեմա 2 **Պետության և իրավունքի ծագումը** **(4 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար պարապունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Նախապետական շրջանի իշխանության և սոցիալական նորմերի ընդհանուր բնութագիրը 2. Պետության և իրավունքի առաջացումը 3. Պետության առաջացման «արևելյան» ճանապարհը 4. Պետության առաջացման «արևմտյան» ճանապարհը 5. Պետության առաջացման հիմնական տեսությունները	Հարցեր 1-5 – ներկայացվում է դասախոսություն: Հարց 2 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար և պատրաստվում են սեմինար պարապմունքին՝պետության և իրավունքի առաջացմանը նպաստող գործոնների վերաբերյալ: Հարցեր 1-5 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են նախապետական շրջանի իշխանության և սոցիալական նորմերի ընդհանուր բնութագիրը, պետության և իրավունքի առաջացման հիմնական գործոնները, պատմական ուղիները և տեսությունները, կատարվում է դրանց խմբային քննարկում: Սովորողները ներկայացնում են ինքնուրույն աշխատանքի արդյունքները:

Թեմա 3 **Պետության հասկացությունը և էությունը**

(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Պետությունը որպես հասարակական-քաղաքական երևույթ 2. Պետության հասկացությունը և հատկանիշները 3. Պետության էությունը 4. Պետության և իրավունքի հարաբերակցությունը	Հարցեր 1- 4 - անցկացվում է դասախոսություն: Հարցեր 3-4 – ինքնուրույն աշխատանք: Սովորողներն ուսումնասիրում են թեմային առնչվող գրականությունը և դասախոսին ներկայացնում են պետության էության և պետության ու իրավունքի հարաբերակցության վերաբերյալ տեսական վիճելի մոտեցումները՝ դրանց լուծման սեփական դիրքորոշումներով: Հարցեր 1-4 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են պետությունը որպես հասարակական-քաղաքական երևույթ, պետության հասկացությունը և հատկանիշները, էությունը, պետության և իրավունքի հարաբերակցությունը, ինքնուրույն աշխատանքի արդյունքները: Կատարվում է սովորողների հարցում և ինքնուրույն աշխատանքի արդյունքների խմբային քննարկում:

Թեմա 4 **Պետության տիպաբանությունը** **(4 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Պետության տիպաբանության հասկացությունը և նպատակը 2. Պետության տիպաբանության ֆորմացիոն մոտեցումը 3. Պետության տիպաբանության քաղաքակրթական (ցիվիլիզացիոն) մոտեցումը	Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն: Հարց 2 - ինքնուրույն աշխատանք. սովորողներն ուսումնասիրում են թեմային առնչվող գրականությունը և դասախոսին ներկայացնում ֆորմացիայի սահմանման և պետությունների ֆորմացիոն տիպաբանության վիճելի հարցերն ու դրանց կապակցությամբ սեփական մոտեցումները: Հարցեր 1-3 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են ինքնուրույն աշխատանքի արդյունքները, կատարվում է նրանց գիտելիքների ստուգում հարցման միջոցով:

Թեմա 5 **Պետական իշխանություն** **(4 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Պետական իշխանության հասկացությունը 2. Պետական իշխանության տնտեսական, սոցիալական և բարոյաքաղաքական հիմունքները 3. Իշխանահարաբերություններ 4. Պետական իշխանության իրականացման մեթոդները 5. Պետական իշխանության լեգիտիմությունը և լեգալու-	Հարցեր 1-6 - անցկացվում է դասախոսություն: Հարցեր 5-6 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը, ուսումնասիրում պետական իշխանության լեգիտիմության ապահովման եղանակները և իշխանությունների միասնականության ու տա-

թյունը 6. Իշխանությունների միասնականությունն ու տարանջատումը	ռանջատման հայեցակարգի ժամանակակից հիմնախնդիրները: Հարցեր 1-6. Սեմինար պարապմունք: Կատարվում է սովորողների գիտելիքների ստուգում հարցման եղանակով: Խմբային քննարկման միջոցով ամփոփվում են ինքնուրույն աշխատանքի արդյունքները:

Թեմա 6 **Պետության գործառույթները** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Պետության գործառույթների հասկացությունը 2. Պետության գործառույթների համակարգը	Հարցեր 1-2 - անցկացվում է դասախոսություն: Հարց 1- ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ գրականությանը և դասախոսին ներկայացնում պետության գործառույթների և պետության կողմից իրականացվող գործունեության այլ տեսակների սահմանազատման վերաբերյալ տեսական մոտեցումները և սեփական դիրքորոշումները: Հարցեր 1-2 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են պետության գործառույթների հասկացությունը և դրանց համակարգը, կատարվում է ինքնուրույն աշխատանքի արդյունքների խմբային քննարկում:

Թեմա 7 **Պետության ձևը** **(6 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Պետության ձևի հասկացությունը և տարրերը 2. Պետության կառավարման ձևը 3. Պետության կառուցվածքի ձևը 4. Պետական ռեժիմի ձևը	Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն: Հարցեր 2-3 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը: Ըստ նախապես տրված հանձնարարության՝ կատարում են կառավարման կիսանախագահական և խորհրդարանական ձևերի համեմատաիրավական վերլուծություն, ներկայացնում են համադաշնության՝ որպես պետության կառուցվածքի ձևի վերաբերյալ տեսական մոտեցումները և սեփական դիրքորոշումները: Հարցեր 1-4: Սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են թեման, ինչպես նաև կազմակերպվում է ինքնուրույն աշխատանքի արդյունքների խմբային քննարկում:

Թեմա 8 **Պետության մեխանիզմ** **(6 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման**

	մեթոդաբանություն
1. Պետության մեխանիզմի հասկացությունը և էությունը 2. Պետության մեխանիզմի կազմակերպման և գործունեության սկզբունքները 3. Պետության մեխանիզմի կառուցվածքը 4. Պետական մարմին: Հասկացությունը և տեսակները 5. Բյուրոկրատիզմը պետական մեխանիզմում 6. Պետության և տնտեսության փոխհարաբերությունը 7. Իրավունքի ուսումնասիրությունը տնտեսագիտության տեսանկյունից	Հարցեր 1-7 - անցկացվում է դասախոսություն: Հարց 5 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ գրականությանը, և դրա վերլուծության հիման վրա դասախոսին ներկայացնում բյուրոկրատիզմի էության և դրա հաղթահարման ուղիների վերաբերյալ սեփական մոտեցումները: Հարցեր 1-7 – սեմինար պարապմունք: Սովորողների հարցման, ինչպես նաև խմբային քննարկման միջոցով կատարվում է դասավանդված նյութի և ինքնուրույն աշխատանքի արդյունքների ամփոփում, պարզվում է դրանց յուրացման աստիճանը:

Թեմա 9 Քաղաքական համակարգը (4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Քաղաքական համակարգի հասկացությունը և կառուցվածքը 2. Պետությունը քաղաքական համակարգում 3. Հասարակական միավորումները քաղաքական համակարգում 4. Քաղաքական համակարգի այլ մասնակիցեները	Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն: Հարց 3 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ գրականությանը, և դրա վերլուծության հիման վրա դասախոսին ներկայացնում հասարակական միավորումների դերակատարությունը քաղաքական համակարգում: Հարցեր 1-5 – սեմինար պարապմունք: Սովորողների հարցման, ինչպես նաև խմբային քննարկման միջոցով կատարվում է դասավանդված նյութի և ինքնուրույն աշխատանքի արդյունքների ամփոփում, պարզվում է դրանց յուրացման աստիճանը:

Հարցաշար

«Պետության և իրավունքի տեսություն 1» դասընթացի քննության

1. Պետության և իրավունքի տեսությունը որպես հումանիտար գիտություն

2. Պետության և իրավունքի տեսությունը որպես հիմնարար իրավաբանական գիտություն
3. Պետության և իրավունքի տեսության առարկայի բնութագիրը
4. Պետության և իրավունքի տեսության մեթոդները
5. Պետության և իրավունքի տեսության ուսումնական դասընթացը
6. Նախապետական շրջանի իշխանության և սոցիալական նորմերի ընդհանուր բնութագիրը
7. Պետության և իրավունքի առաջացումը
8. Պետության առաջացման «արևելյան» ճանապարհը
9. Պետության առաջացման «արևմտյան» ճանապարհը
10. Պետության առաջացման հիմնական տեսությունները
11. Պետությունը որպես հասարակական-քաղաքական երևույթ
12. Պետության հասկացությունը և հատկանիշները
13. Պետության էությունը
14. Պետության և իրավունքի հարաբերակցությունը
15. Պետության տիպաբանության հասկացությունը և նպատակը
16. Պետության տիպաբանության ֆորմացիոն մոտեցումը
17. Պետության տիպաբանության քաղաքակրթական (ցիվիլիզացիոն) մոտեցումը
18. Պետական իշխանության հասկացությունը
19. Պետական իշխանության տնտեսական, սոցիալական և բարոյաքաղաքական հիմունքները
20. Իշխանահարաբերություններ
21. Պետական իշխանության իրականացման մեթոդները
22. Պետական իշխանության լեգիտիմությունը և լեգալությունը
23. Իշխանությունների միասնականությունն ու տարանջատումը
24. Պետության գործառույթների հասկացությունը
25. Պետության գործառույթների համակարգը
26. Պետության ձևի հասկացությունը և տարրերը
27. Պետության կառավարման ձևը
28. Պետության կառուցվածքի ձևը
29. Պետական ռեժիմի ձևը
30. Պետության մեխանիզմի հասկացությունը և էությունը
31. Պետության մեխանիզմի կազմակերպման և գործունեության սկզբունքները
32. Պետության մեխանիզմի կառուցվածքը
33. Պետական մարմին: Հասկացությունը և տեսակները
34. Բյուրոկրատիզմը պետական մեխանիզմում
35. Քաղաքական համակարգի հասկացությունը և կառուցվածքը
36. Պետությունը քաղաքական համակարգում
37. Հասարակական միավորումները քաղաքական համակարգում
38. Քաղաքական համակարգի այլ մասնակիցեները